

ՄԱՆՀ ԿԸՄ ԱՂՋԻԿ ԹՆԱՌԻԼ ... ՀՍՏ ԿԸՄԸ

Հինէն ի վեր ամուսնացող զոյգերուն փափառն է ըստ կամս մանչ մը կամ աղջիկ մը ունենալ: Այս առթիւ բժիշկներ եւ գիտուններ կարծած են թափանցել գաղտնիքը ըստ կամս մանչ կամ աղջիկ ծնանելու, եւ յանձնաբարած են զանազան միջոցներ՝ իրենց ժուրատն առնելու համար: Արդարեւ ծնողքներ կան, որ պատրաստ են նուիրելու իրենց հարստութիւնը, եթէ գիտնան թէ ի՞նչպէս կարելի է մանչ կամ աղջիկ ծնանիլ. բայց միշտ յուսախաք եղած են յանձնաբարուած եղանակներէն:

Նախապէս կը կարծուէր թէ յղութեան առաջին իսկ օրերուն, հազիւ թէ սաղմը կազմուաճ՝ արդէն որոշ է սեռը: Ծնդհակառակն, յետոյ կարծուեցաւ որ արտաքին ազդեցութիւնները կը կամ փոխել սեռը: Հեղինակ մը, ժիւլ Ամար, կը հաւատայ թէ մօր կեանքի պայմանները միայն կը ճշդեն զաւկին սեռը: Միջավայրն ալ կ'ազդէ, կ'ըսեն ուրիշներ: Ամէն առիթ, որ ծուն կը զրկէ կատարելապէս սընանելէ, ծնունդ կուտայ աղջիկիւ ու, կ'ըսեն ոմանք, աղքատ ընտանիքները, որոնք առատ մնունդ չեն ստանար, միշտ մանչ զաւակներ ունին. եւ սովոր տարիներուն յաճախադէպ է մանչերու ծընունդը:

Բայց այժմ, նոր կարծիք մը կայ: Երբ կը նուազի կենդանական ջերմութիւնը (*métabolisme basal*), որ կախում ունի մնունդի իւրացման աստիճաննէն, աւելի աղջիկ կը ծնանին քան մանչ: Բնաճխային թթուով թունաւորումը այդ արդիւնքը կուտայ, կ'ըսեն: Սակայն բազմաթիւ հիւանդութիւններ, որոնք կը նուազեցնեն կենդանական ջերմութիւնը, հակառակ արդիւնք կուտան,

Պնդողներ կան թէ մօր առողջութիւնը եւ մննդապահութեան եղանակը կարեւոր ազդակներ են սեռերու ծնունդին համար: Իրբեւ թէ դարմանաբանական կարգ մը եղանակներ կ'որոշեն զաւկին սեռը: Նոյնպէս ալիւրեղէնով, բանցարեղէնով, ընդեղէնով եւ ջրածխային մնունդներով կերակրուող ամէն ընտանիք մանչ զաւակ կ'ունենայ, կ'ըսեն: Եւ իբր օրինակ ցոյց կուտան ցունաստանը, խտալիան, որոնք կը մնանին հայսապուրներով, բրինձով, եւ աւելի մանչ կը ծնանին:

Գեւ բնախօսական բացատրութիւն տուողներ ալ կան: Ոմանք համոզուած են, որ տկար սեռը կուտայ իր սեռը ծնած զաւկին:

Ուրիշներ կը հաւատան թէ միշտ աջ կամ ձախ կողմին վրայ պառկելով կարելիք է մանչ կամ աղջիկ ունենալ:

Ճշմարիտը այն է որ սեռերու որոշման պատճառները տակաւին ճշդուած չեն: